ԼՐԱՏՈՒ ХРОНИКА

ԿՈՄԻՏԱՍԻ ԾՆՆԴՅԱՆ 100-ԱՄՅԱԿԻ ՏՈՆԱԿԱՏԱՐՈՒԹՅՈՒՆԸ

Հայ ժողովրդի մեծ զավակ Կոմիտասի ծննդյան 100-ամյակը հանդիսավորությամբ նշվեց ինչպես Հայաստանում, այնպես էլ Սովետական Միության բոլոր ժողովուրդների և աշխարհի առաջադեմ մարդկության կողմից։

1969 թ. նոյեմբերի 21-ին Երևանի Ալ. Սպենդիարյանի անվան օպերայի ու բալետի պետական թատրոնում գումարվեց Հայաստանի կոմկուսի Կենտկոմի, Հայկական ՍՍՀ Գերագույն սովետի նախագահության և Մինիստրների սովետի հանդիսավոր նիստը՝ նվիրված մեծ կոմպոզիտորի հոբելյանին։

Հանդիսավոր նիստը ներածական խոսքով բացեց Հայկական ՍՍՀ Գերագույն սովետի նախագահության նախագահ, հանրապետական հոբելյանական հանձնաժողովի նախագահ Ն. Հարությունյանը (ընկ. Հարությունյանի բացման խոսքը տպագրված է «Պատմա-բանասիրական հանդեսի» նախորդ համարում)։

Ելույթի վերջում Ն. Հարությունյանը ներկայացրեց կոմիտասյան տոնախմբությունների առթիվ Հայաստան ժամանած սովետական հանրապետությունների պատվիրակություններին, արտասահմանյան մի շարք երկրների ներկայացուցիչներին, սփյուռքահայ երաժշտական, գրական, հասարակական գործիչներին։

Հոբելյանական նիստում «Խոսք Կոմիտասի մասին» զեկուցումով հանդես եկավ Հայաստանի կոմպոզիտորների միության վարչության նախագահ է. Միրզոյանը։ Բազմակողմանիորեն բնութագրելով Կոմիտասին՝ իբրև կոմպոզիտոր ու մանկավարժ, ազգագրագետ-բանահավաք ու խմբավար, հայ երաժշտության խորամիտ տեսաբան ու մեծ հայրենասեր, զեկուցողը նշեց Կոմիտասի կատարած գործի բացառիկ դերը հայ մշակույթի պատմության մեջ։

— Կոմիտասը իր կյանքով,— ասաց նա,— իր տիտանական ստեղծագործական աշխատանքով, մաքառումով խորհրդանշում է հայ ժողովրդի պատմությունը, պայքարը, ճակատագիրը։ Մեր ժողովրդի հոգևոր գոյության համար վճռական ու որոշիչ էր Կոմիտասի կողմից հայ ժողովրդական ինքնատիպ երաժշտության հայտնագործությունը, այն արվեստի, որը փաստորեն դարեր շարունակ գոյություն ուներ ժողովրդի մեջ, սակայն հեռու էր մնացել համազգային ինքնագիտակցությունից, չէր դարձել համայն մարդկության սեփականությունը։

Հանդիսավոր նիստում ելույթ ունեցան ու ողջույնի խոսք ասացին ՍՍՀՄ եղբայրական հանրապետությունների պատվիրակությունների ղեկավարները, արտասահմանյան երկրների հյուրերը, այդ թվում՝ ՍՍՀՄ կոմպոզիտորների միության վարչության քարտուղար, Սովետական Միության ժողովրդական արտիստ Դ. Կաբալևսկին, ՌՍՖՍՀ կուլտուրայի մինիստրի տեղակալ Դ. Ալեքսանդրովը, Բելոռուսիայի կոմպոզիտորների միության վարչության նախագահ Դ. Շիրման, Ուզբեկստանի կոմպոզիտորների միության վարչության նախագահ Ա. Ջաբարովը, Ղազախստանի կոմպոզիտորների միության վարչության նախագահ Ե. Ռահմատիևը, Վրաստանի կոմպոզիտորների միության վարչության առաջին քարտուղար, ՍՍՀՄ ժողովրդական արտիստ Ա. Բալանչիվաձեն, Ադրբեջանի կոմկուսի Կենտկոմի կուլտուրայի բաժնի վարիչ Ա. Շարիֆովը, Լիտվայի կոմպոզիտորների միության վարչության նախագահի տեղակալ Պ. Տամուլյունուսը, Մոլդավիայի ժողովրդական կրթության մինիստր Ե. Պոստովոյը, Լատվիայի կուլտուրայի մինիստր Վ. Կաուպուժը, Կիրգիզիայի կոմպոզիտորների միության վարչության նախագահի տեղակալ Ն. Դովլեսովը, Տաջիկստանի կոմպոզիտորների միության վարչության նախագահ Շ. Սայֆուդդինովը, Թուրքմենիայի կոմպոզիտորների միության վարչության նախագահ Ա. Կուլիևը, Էստոնիայի կոմկուսի Կենտկոմի կուլտուրայի բաժնի վարիչի տեղակալ Ա. Սաարը, Լեհաստանի «Կուլտուրա» շաբաթաթերթի խմբագիր Ա. Կլյուկովսկին, Արաբական Միացյալ Հանրապետության կոմպոզիտորների ասոցիացիայի քարտուղար Ա. Ռահեմը, Ճապոնիայի կոմպոզիտորների ասոցիացիայի պրեզիդենտ Ս. Տոնատան, ամերիկահայ գրող ու կոմիտասագետ Հ. Ասատուրյանը։

Կոմիտասի ծննդյան 100-ամյակը հանդիսավոր իրադրության մեջ նշվեց մեր հայրենիքի մայրաքաղաք Մոսկվայում։ Տոնակատարությունն սկսվեց Չայկովսկու անվան կոնսերվատորիայի փոքր դահլիճում դեկտեմբերի 2-ին կայացած հոբելյանական երեկոյով, որը ընդարձակ խոսքով բացեց արվեստագիտության դոկտոր, պրո-

ֆիսոր Գ. Տիգրանովը: Նա բազմակողմանիորեն բնութագրեց մեծ արվեստագետի կյանքն ու գործը, նրա արվեստի նշանակությունը հայ և համաշխարհային երաժշտության պատմության մեջ։ Երեկոն եզրափակվեց Կոմիտասի գործերի կատարմամբ։

Դեկտեմբերի 3-ին Միությունների տան սյունադարդ դահլիճ էին հավաքվել մայրաքաղաքի հասարակայնության բազմաթիվ ներկայացուցիչներ, եղբայրական հանրապետությունների պատվիրակներ, Հայաստանից ժամանած կուլտուրայի գործիչներ։ Երեկոն սկսվելուց առաջ նրա մասնակիցները դիտեցին Հայաստանի արվեստի ու գրականության թանգարանի կազմակերպված Կոմիտասյան մեծ ցուցահանդեսը։

Նախագահությունում էին ՍՍՀՄ Գերագույն սովետի նախագահության անդամ Ա. Միկոյանը, Հայաստանի կոմկուսի Կենտկոմի առաջին քարտուղար Ա. Քոչինյանը, Հայկական ՍՍՀ Գերագույն սովետի նախագահության նախագահ Ն. Հարությունյանը, ՍՄԿԿ Կենտկոմի կուլտուրայի բաժնի վարիչ Ֆ. Շաուրոն, ՍՍՀՄ կուլտուրայի մինիստր Ե. Ֆուրցևան, Սովետական Միության մարշալ Հ. Բաղրամյանը, համամիութենական հորելյանական հանձնաժողովի անդամներ, կուլտուրայի ականավոր գործիչներ։

Երեկոն բացեց համամիութենական հորելյանական հանձնաժողովի նախագահ, ՍՍՀՄ կոմպոզիտորների միության վարչության նախագահ Տ. Խրենենիկովը, որը խոսեց Կոմիտասի արվեստի մեծ դերի ու նշանակության մասին։

Կոմիտասի կյանքի ու ստեղծագործության մասին զեկուցեց ՍՍՀՄ ժողովրդական արտիստ, լենինյան մրցանակակիր Ա. Խաչատրյանը:

— Հայ երգը,— ասաց նա,— Կոմիտասն ուսումնասիրել է ամբողջ խորությամբ, բոլոր մանրամասնություններով։ Նա ճանաչել էր դրա ժանրային և ինտոնացիոն հարստությունը։ Այդ երգը նրա համար դարձել էր այն իսկական հիմքը, որի վրա, ինչպես ինքն էր կարծում, պետք է զարգանա նաև հայ կոմպոզիտորների պրոֆեսիոնալ ստեղծագործությունը։

Զեկուցողը այնուհետև բնութագրեց Կոմիտասի բազմակողմանի ստեղծագործությունը և նրա գործունեության տարբեր բնագավառները։

Կոմիտասի արվեստի մասին երեկոյում խոսեցին ՌՍՖՍՀ կոմպոզիտորների միության վարչության քարտուղար Բ. Զայկովսկին, Ուկրաինայի կոմպոզիտորների միության վարչության նախագահ Ա. Շտոզարենկոն, Վրացական ՍՍՀ կուլտուրայի մինիստր, կոմպոզիտոր Ց. Թամբարիշվիլին, Լիտվայի կոմպոզիտորների միության վարչության նախագահ Է. Բալսիսը, Ուզբեկստանի կոմպոզիտորների միության վարչության նախագահ Ա. Ջաբարովը, Ադրբեջանի կոմպոզիտորների միության վարչության քարտուղար Ս. Ռուստամովը, Հայաստանի կոմպոզիտորների միության վարչության նախագահ Է. Միրզոյանը:

Հայաստանի արտիստներն ու երաժշտական կոլեկտիվները մեծ համերգ տվեցին արվեստի աշխատողների կենտրոնական տանը, ելույթ ունեցան Մոսկվայի գիտնականների առջև, Մոսկվայի մարզի Կալինինգրադ քաղաքում։ Կոմիտասին նվիրված հաղորդումներ տվեցին կենտրոնական հեռուստատեսությունը և համամիութենական ռադիոն։ Դեկտեմբերի 16-ին Կոմիտասի կյանքին ու գործունեությանը նվիրված ճոխ հաղորդում տրվեց Լենինգրադի հեռուստատեսությամբ։

* * *

Նոյեմբերի 17-ին Հայկական ՍՍՀ գիտությունների ակադեմիայի նիստերի դահլիճում կայացավ ակադեմիայի արվեստի ինստիտուտի, Հայաստանի կոմպոզիտորների միության և Երևանի Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիայի միացյալ գիտական նստաշրջանը՝ նվիրված Կոմիտասի ծննդյան 100-ամյակին։

Նստաշրջանին ներկա էին ՀԿԿ Կենտկոմի առաջին քարտուղար Ա. Քոչինյանը, ՀՍՍՀ Գերագույն սովետի նախագահության նախագահ Ն. Հարությունյանը, ՀԿԿ Երևանի քաղկոմի առաջին քարտուղար Լ. Ղարիբջանյանը, ՀՍՍՀ կուլտուրայի մինիստր Կ. Ուզումյանը, հյուրեր ՍՍՀՄ եղբայրական հանրապետություններից։

Բացելով նստաշրջանը, ՀՍՍՀ ԳԱ պրեզիդենտ, ակադ. Վ. Համբարձումյանն ասաց.

— Կոմիտասը հավաքեց հայ ժողովրդական երգերն ու մեղեդիները, մաքրեց դրանք անհարազատ նստվածքներից, մեծագույն վարպետությամբ մշակեց և այդպիսով ստացված շողշողուն, հղկված ադամանդի բյուրեղները վերադարձրեց ժողովրդին։ Այդ անզուգական հարստությունը ընդմիշտ մտավ մեր մշակույթի գանձարանը՝ որպես նրա կարևորագույն մասը։

«Կոմիտասը և համաշխարհային երաժշտությունը» զեկուցումով հանդես եկավ արվեստագիտության թեկնածու Դ. Դյոդակյանը։ Նա նշեց, որ Կոմիտասը ժողովրդական երգի մշակումը դարձրեց ստեղծագործական մեծ նշանակություն ունեցող գործ, մի բան, որ ժամանակին այդպես չէր դիտվում։ Որպես մեծ նորարար, Կոմիտասը իր խնդիրը համարեց ազգային երաժշտության ինքնուրույն ոճի հիմքերի ստեղծումը։ Կոմիտասի ընտրած սկզբունքները նոր էին ոչ միայն հայկական, այլև շատ բանով համաշխարհային երաժշտական արվեստի համար։

Արվեստագիտության դոկտոր, պրոֆեսոր Գ. Չիլիկվանեն (Թբիլիսի) «Հայրենի ավանդական երաժշտության բարգավաճման անխոնջ մարտիկը» թեմայով զեկուցման մեջ ընդգծեց, որ Կոմիտասը պատմական դժնի պայմաններում բարձր պարզեց հայ երգարվեստի գոյության ու զարգացման դրոշը։

Արվեստագիտության թեկնածու Մ. Մուրադյանը զեկուցեց «Կոմիտասը և հայ երաժշտության ցուցադրումը Եվրոպայում» նյութի շուրջը։ Իր ամբողջ գործունեության ընթացքում Կոմիտասն առանձնակի ուշադրություն դարձրեց հայ երաժշտության պրոպագանդմանը հայկական իրականության մեջ ու Եվրոպայում,— ասաց նա։— Եվրոպայի նշանավոր երաժշտագետները բարձր են գնահատել և՛ հայ երգը, և՛ Կոմիտասի գործը։

«Կոմիտասը և ժողովրդական երգի բանաստեղծական խոսքը» զեկուցման մեջ ՀՍՍՀ ԳԱ թղթակից-անդամ Ա. Ղանալանյանը նշեց, որ Կոմիտասը ժողովրդական երգը գնահատել է իբրև ժողովրդի հույզերի ու մտորումների հարազատ արտահայտություն, իբրև «գեղջուկ կյանքի լրիվ պատկերը»։ Նա ժողովրդական երգի խոսքն ու եղանակը դիտում էր միասնության մեջ։ Կոմիտասի բանահավաքչական աշխատանքում բանաստեղծական խոսքի գրառումը անբաժան է եղել եղանակի ձայնագրումից։ Նրա գրառած բազմաթիվ ժողովրդական երգերի բանաստեղծական խոսքերը մեծ արժեք են ներկայացնում բանագիտության համար։

Արվեստաբանության դոկտոր, պրոֆեսոր Յա. Վիտոլինը (Ռիգա) զեկուցեց լատիշա-հայկական երաժշտական կապերի մասին, ցույց տալով, որ դրանք սկիզբ են առնում Պետերբուրգի և Մոսկվայի կոնսերվատորիաներում լատիշ ու հայ երիտասարդների համատեղ ուսումնառությունից։

«Հայ քաղաքային ժողովրդական երգը Կոմիտասի ստեղծագործության մեջ» զեկուցումով հանդես եկավ արվեստագիտության թեկնածու Ռ. Աբայանը. նա խոսեց այն մասին, որ Կոմիտասը, դեռ ուսանողական տարիներից, գեղջկական երգի ուսումնասիրությանը զուգընթաց, հետաքրքրվել, հավաքել և մշակել է քաղաքային ժողովրդական երգեր, որոնք իրենց հայրենասիրական ու ազատասիրական ոգով արտահայտել են Կոմիտասի քաղաքական համոզմունքները։

Երաժշտագետ Կ. Խուդաբաշյանը անդրադարձավ Կոմիտասին նախորդած հայ-պրոֆեսիոնալ երաժշտության զարգացմանը V—XVI դարերում։ Կոմիտասը գիտական բարձրության հասցրեց հայ հոգևոր երգի ուսումնասիրումը, գալով այն եզրակացության, որ ժողովրդական ու հոգևոր երգերը ոճական միասնություն ունեն։ Նա ձգտում էր վերծանել հայկական խազերը, ցանկանալով ոչ միայն հարազատորեն վերականգնել հայ հոգևոր երաժշտությունը, այլև նրանում գտնել ժողովրդական երաժշտության հնագույն շերտերը։

Ամերիկահայ կոմիտասագետ Հ. Ասատուրյանը հանդես եկավ «Կոմիտասյան երգի կազմությունը» զեկուցմամբ։ Նա ցույց տվեց, որ Կոմիտասի երգերը հակիրճ են ու մշակված բյուրեղացման աստիճանի։ Միայն հանճարեղ արվեստագետը կարող է հասնել այդպիսի պարզության։

Երևանի կոնսերվատորիայի պրոֆեսոր Ռ. Շահնազարյանը զեկուցեց «Կոմիտասի տասը պատվիրանները երգիչներին» թեմայով։ Արվեստագիտության թեկնածու Ն. Թահմիզյանի զեկուցումը նվիրված էր «Կոմիտասի 1893 թ. հոգևոր երգերի ձեռագիր ժողովածուն» նյութին։

Կոմիտասի՝ իր ժամանակի երաժշտության հանդեպ ունեցած մոտեցման հարցին անդրադարձավ արվեստագիտության թեկնածու Ց. Բրուտյանը։ Նա ցույց տվեց, որ Կոմիտասը իր գիտահետազոտական-վերլուծական մեթոդով խորացավ մեր ազգային երաժշտության ընդերքը, ի հայտ բերեց նրա օրինաչափությունները, կառուցման տարրերն ու սկզբունքները։

«Կոմիտասը կերպարվեստում» զեկուցումը, որով հանդես եկավ արվեստագիտության թեկնածու Մ. Ղազարյանը, վերաբերում էր կոմպոզիտորի կերպարի արտացոլմանը նկարիչների և քանդակագործների կողմից։

Եգիպտոսում 1911 թ. Կոմիտասի տված համերգների և դասախոսությունների մասին զեկուցեց եգիպտահայ կոմպոզիտոր-խմբավար Է. Հակոբյանը։

Նստաշրջանում լսվեց նաև Լայպցիգի կոնսերվատորիայի պրոֆեսոր Ռ. Շչեցկուսի «Կոմիտասը Բեռլինում» զեկուցումը. նա պատմեց Կոմիտասի բեռլինյան ուսումնառության մի շարք մանրամասներ։

* * *

Կոմիտասի ծննդյան 100-ամյակի առթիվ Երևանի կոնսերվատորիայի նորակառույց շենքի առջև նոյեմբերի 19-ին տեղի ունեցավ կոմպոզիտորի հուշարձանի հիմնադրման արարողություն, որին ներկա էին ՀԿԿ Կենտկոմի առաջին քարտուղար Ա. Քոչինյանը, ՀՍՍՀ Գերագույն սովետի նախագահության նախագահ Ն. Հարությունյանը, ՀԿԿ Կենտկոմի քարտուղարներ Գ. Տեր-Ղազարյանցը, Ռ. Խաչատրյանը, կոմպոզիտորներ Ա. Խաչատրյանը, Դ. Կաբալևսկին, Կոմիտասի ծննդյան 100-ամյակն անցկացնող հանրապետական ու համամիութենական հանձնաժողովների անդամներ, միութենական հան-

բապետություններից ժամանած պատվիրակություններ, արտասահմանյան հյուրեր։

Դիմելով հավաքվածներին, Երևանի քաղկոմի առաջին քարտուղար Լ. Ղարիբջանյանը խոսեց Կոմիտասի գործի համընդհանուր ճանաչման մասին, այն մասին, որ կոմիտասյան հոգեբուխ երգը, իբրև ճշմարիտ հայելի, աշխարհին է ներկայացնում ծանր մաքառումների բովով անցած և առնականորեն հառնող մի ժողովուրդ։ Իբրև այդպիսին, նրա ռեալիստական ստեղծագործությունը օգնեց մեր ազգային ինքնաճանաչմանն ու հոգևոր վերելքին։ Իրականացել է Կոմիտասի երազանքը, նշեց զեկուցողը, Հայաստանում գործում է ազգային կոնսերվատորիա, որը շարունակում է կոմպոզիտորի ավանդույթները։

Միտինգում ելույթ ունեցան կոնսերվատորիայի դիրեկտոր Ղ. Սարյանը, ՀՍՍՀ ժողովրդական նկարիչ Գ. Խանջյանը, Լատվիայի կոմպոզիտորների միության վարչության նախագահ Ռ. Գեդերտը, Հայաստանի գրողների միության վարչության քարտուղար Պ. Սևակը։

Նույն օրը Երևանի կենտրոնական պանթեոն՝ Կոմիտասի գերեզմանի մոտ էին հավաքվել Հայաստանի մայրաքաղաքի և շրջանների հասարակայնության ներկայացուցիչները, կուսակցության և կառավարության ղեկավարները, հյուրեր սովետական հանրապետություններից և արտասահմանից։ Տեղի ունեցավ միտինգ, որը բացեց Երևանի քաղսովետի գործկոմի նախագահ Գ. Հասարբյանը։ Նա ասաց.

— Կոմիտասը մեծ քաղաքացի ու հայրենասեր էր, նա իր մեջ խտացրել էր հայ ժողովրդի լավագույն գծերը, խորհրդանշել նրա ոգու արիությունը։ Իր նախորդ մեծերի պես նա էլ ողջ կյանքը և գործունեությունը նվիրաբերեց ժողովրդի պայծառ երազանքների ու ձգտումների իրականացմանը։

Միտինգում հանդես եկան կոմպոզիտոր Է. Հովհաննիսյանը, Երևանի էլեկտրամեքենաշինական գործարանի բանվոր, ՀՍՍՀ Գերագույն սովետի դեպուտատ Մ. Մխիթարյանը, Կոմիտասի անվան կոնսերվատորիայի ուսանողուհի Հ. Տեր-Ղազարյանը, եգիպտահայ կոմպոզիտոր և խմբավար Է. Հակոբյանը, ՍՍՀՄ կոմպոզիտորների միության՝ ՍՍՀՄ ժողովուրդների երաժշտության հանձնաժողովի նախագահ Յա. Սոլոդովսոն։

Վերջում, կոմիտասյան հնչյունների ներքո, ՀԿԿ Կենտկոմի, հանրապետության Գերագույն սովետի և Մինիստրների սովետի կողմից կոմպոզիտորի շիրմին պսակներ են դնում Ա. Քոչինյանը, Գ. Տեր-Ղազարյանցը, Ռ. Խաչատրյանը և ուրիշներ։ Պսակներ դրվեցին նաև միութենական և հանրապետական կոմպոզիտորների միությունների, ՍՍՀՄ և ՀՍՍՀ կուլտուրայի մինիստրությունների, այլ գերատեսչությունների ու կոլեկտիվների կողմից։

Նոյեմբերի 20-ին էջմիածնի շրջանի աշխատավորությունը հանդիսավորությամբ նշեց մեծ կոմպոզիտորի հոբելյանը։ Այստեղ էին ժամանել ՀԿԿ Կենտկոմի առաջին քարտուղար Ա. Քոչինյանը, ՀՍՍՀ Գերագույն սովետի նախագահության նախագահ Ն. Հարությունյանը, ՀԿԿ Կենտկոմի քարտուղար Ռ. Խաչատրյանը, Կոմիտասի ծննդյան 100-ամյակն անցկացնող հանրապետական և համամիութենական հանձնաժողովների անդամներ, հյուրեր սովետական հանրապետություններից և արտասահմանից։

Կոմիտասի հուշարձանի բացմանը նվիրված միտինգը բացեց ՀԿԿ էջմիածնի շրջկոմի առաջին քարտուղար Ռ. Զաքոյանը։ ՀԿԿ Կենտկոմի քարտուղար Ռ. Խաչատրյանը խոսեց այն մասին, թե ինչպիսի տիտանական ջանքերով Կոմիտասը բացահայտեց հայ ժողովրդական երաժշտության խորությունը, նրանում արտահայտված հայ ժողովրդի հոգեկան հարստությունը։ Կոմիտասը սահմանեց ժողովրդայնության և ռեալիզմի սկզբունքը հայ երաժշտության մեջ։ Կոմիտասը,— ասաց նա,— արվեստագետի և ժողովրդի ձուլման մեծագույն օրինակներից մեկն է ոչ միայն հայկական, այլև համաշխարհային մշակույթի պատմության մեջ։

Միտինգում ելույթ ունեցան ՀՍՍՀ ժողովրդական արտիստ, կոմպոզիտոր Ա. Հարությունյանը, ամերիկահայ դաշնակահարուհի Լ. Իշխանյանը, Վրաստանի կոմպոզիտորների միության վարչության քարտուղար Դ. Թորաձեն, ՀՍՍՀ կուլտուրայի մինիստր Կ. Ուդումյանը և ուրիշներ։

Կոմիտասի հուշարձանը բացեց ՀԿԿ Կենտկոմի առաջին քարտուղար Ա. Քոչինյանը։ Այնուհետև ներկաները այցելեցին էջմիածնի ճեմարանի նախկին շենքը, որը վեր է ածվել Կոմիտասի թանգարանի։

Կոմիտասի ծննդյան 100-ամյակը շուքով նշեց նաև Լենինականի հասարակայնությունը։ Տեղի ունեցավ հանդիսավոր երեկո, որը բացեց ՀԿԿ Լենինականի քաղկոմի առաջին քարտուղար Մ. Մուրադյանը։ Զեկուցումով հանդես եկավ Հայաստանի կոմպոզիտորների միության վարչության նախագահ Է. Միրզոյանը, իսկ ելույթներ ունեցան՝ ՍՍՀՄ ժողովրդական արտիստ Ա. Խաչատրյանը, ՀՍՍՀ կուլտուրայի մինիստր Կ. Ուդումյանը, Ճապոնիայի կոմպոզիտորների ասոցիացիայի պրեզիդենտ Ս. Տոկատան, ԱՄՀ-ի կոմպոզիտորների ասոցիացիայի քարտուղար Ա. Ռահեմը, Ն. Տիգրանյանի անվան երաժշտական դպրոցի դիրեկտոր Ա. Ներսիսյանը և ուրիշներ։

Ա. ԾԱՏՈՒՐՅԱՆ